Լուսաբանում

Ս/թ մարտի 23-ին՝ ժամը 18:00-ին, Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարանի «Խոհարարական գործ՝ խոհարար» մասնագիտությամբ ուսանողները, հեռավար եղանակով իրականացրին վարպետաց դաս ամերիկահայ գործարարներ, ռեստորանային ցանցի սեփականատերեր՝ տեր և տիկին Սերոբյանների հետ: Նրանց Ա դասի Հոմ /HOME/ ռեստորանը բավականին մեծ հեղինակություն է վայելում Կալիֆորնիա նահանգի Բըրբենգ քաղաքում, հայտնի է իր պահանջկոտ և բարձրաճաշակ հաճախորդներով, ինչպես նաև՝ ծավալած գործունեությամբ:

Նրանք սիրով և մանրակրկիտ ցուցադրեցին "Հոմ" /HOME /ռեստորանի հյուրասրահը, խոհանոցը, բացօթյա տարածքը՝ ռեստորանի անվանը յուրահատուկ ինտերիերով, որը հիշեցնում էր «տան ջերմ» մթնոլորտ: Ներկայացվեց սննդամթերքի ընունման հոսքը, խոհանոցում իրականացվող նախապատրաստական աշխատանքների ողջ ընթացքը: Խոսվեց տեր և տիկին Սերոբյանների հաջողության գաղտնիքի մասին, որի գրավականը համեղ և առողջարար սնունդն է, ինչպես նաև՝ հաճախորդների նկատմամբ անհատական, սիրալիր վերաբերմունքը, որն էլ հանդիսանում է նրանց հիմնական գովազդը:

Ուսանողները մասնագիտական բազմաբովանդակ հարցեր հղեցին կայացած ռեստորանային բիզնես և երկար տարիների հմուտ փորձ ունեցող գործարարներին:

Դասավանդող՝ Ա. Պետոյան

Ծրագիր

«Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ

Ծրագիր
«Ազգային հագուստ» խորագրով բաց դասի

Առարկա՝ հասարակագիտություն

ԹԵՄԱ՝ Ազգային տարազը՝ որպես ազգային մշակույթի կրող

Նպատակ.

- ներկայացնել հայկական ազգային հագուստը՝ որպես ազգային մշակույթի կրող
- ծանոթացնել ազգային հագուստի ստեղծման և զարգացման պատմությանը
- նպաստել ուսանողների վերլուծական մտքի զարգացմանը:

Նախապատրաստական աշխատանքներ.

1. ներկայացնել տարազը լուսաբանող նյութեր,
2. ուսանողներին հանձնարարել ուսումնասիրել և ներկայացնել Հայաստանի տարբեր տարածաշրջանների ավանդական հայկական հագուստների վերաբերյալ նյութեր

Ընթացք.

1. բացման խոսք,
2. ներկայացնել հայկական ավանդական հագուստի մեջ գերակշռող չորս տարրերը
3. հայկական ազգային տարազների ներկայացնում, /սահիկաշար/
4. տեսանյութի ցուցադրում,
5 կարծիքների փոխանակում:

Ակնկալվող արդյունք.

- հայկական ավանդական հագուստի՝ տարազի պատմությանը ծանոթ,
- տարազի նշանակությունը արժևորող,
- քննարկվող նյութի վերաբերյալ իրենց կարծիքն ունեցող ուսանողներ:

Դասավանդող՝ Ա. Աղաբաբյան

Լուսաբանում

Սույն թվականի մարտի 26-ին հասարակագիտություն առարկայից տեղի ունեցավ բաց դաս «Ազգային տարազը՝ որպես ազգային մշակույթի կրող» խորագրով: Դասի նպատակն էր ուսանողներին ծանոթացնել ազգային հագուստի զարգացման պատմությանը, նշանակությանը՝ որպես ազգային մշակույթի անբաժանելի և բաղկացուցիչ մաս:

Ուսանողներին նախօրոք հանձնարարվել էր ներկայացնել ազգային տարազը լուսաբանող նյութեր:

Հետաքրքիր ու տրամադրող էր դասի մուտքը. ազգային պարը՝ աղջիկների կատարմամբ, ստեղծեց հաճելի մթնոլորտ: Հայկական ազգային տարազները, դրանց ստեղծման պատմությունը ուսանողները ներկայացրին ըստ տարածաշրջանների՝ զուգահեռ ցուցադրելով իրենց կազմած սահիկաշարը: Մեջբերվեց 14-րդ դարի հայ փիլիսոփա Գրիգոր Տաթևացու վկայությունը, որ հայկական տարազի մեջ գերակշռում են երկրի չորս տարրերը՝ հող, ջուր, օդ, կրակ: Նշվեց նաև, որ Հայաստանի յուրաքանչյուր գավառ տարբերվում է իր տարազով, գույների համադրությամբ, զարդանախշերի ինքնատիպությամբ և առնչվում է արվեստի մյուս բնագավառների հետ: Բազմաթիվ գործոններից կախված՝ տարազի տեսքը դարերի ընթացքում փոխվել է: Դասի վերջում ծավալվեց կարծիքների փոխանակում, ուսանողները եկան այն եզրակացության, որ ազգային տարազը կազմում է մշակույթի անքակտելի մասը, և դրանք այժմ մասնակիորեն պահպանվել և օգտագործվում են պարարվեստում, կինոյում, թատրոնում:

Կազմակերպիչ՝ Աննա Աղաբաբյան

Նկարադարան

Ծրագիր

«Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ

Ծրագիր
բաց դասի

Մասնագիտություն՝ «Խոհարարական գործ՝ խոհարար»
Կուրս՝ II
Անցկացման ամսաթիվ՝ _____ 20 թ.
Թեմա՝ «Համեմունքներ»

Նպատակ

- ներկայացնել համեմունքների ծագումը և բուժական նշանակությունը,
- ուսանողների մոտ զարգացնել համային և հոտային զգայունությունը, համային ճաշակը,
- ներկայացնել համեմունքների ճիշտ համադրումը՝ մսամթերքների, բանջարեղենների, մրգերի, թխվածքների, աղանդերի, հացաբուլկեղենի, ըմպելիքի հետ՝ տարբերակելով համեմունքները,
- ցուցադրել ուսանողների կողմից պատրաստված պատրաստուկները՝ համեմված տարատեսակ համեմունքներով
- ինքնուրույն ստեղծել համային կոմպոզիցիաներ:

Նախապատրաստական աշխատանքներ

Ուսանողներին հանձնարարել փնտրել և մշակել անհրաժեշտ տեղեկատվություն վերոնշյալ թեմաներով, ստեղծել թեմատիկ տեսանյութ կամ սահիկաշարեր.

- ✓ համեմունքների ծագումնաբանությունը, դերը նշանակությունը, դասակարգումը, բուժական նշանակությունը, պահեստավորման կարգը, պիտանելիության ժամկետները,
- ✓ ջերմային մշակումով համեմունքների առավելագույն համի և բույրի ստացումը,
- ✓ մսամթերքի, աղանդերի և հացաբուլկեղենի հետ համեմունքների համադրումը:

Դասի ընթացք

Դասն ընթանում է 2 փուլով՝

1-ին փուլ՝ տեղեկատվական-վերլուծական

Սահիկաշարի ցուցադրմանը զուգահեռ ներկայացնել, մեկնաբանել համեմունքների վերաբերյալ բովանդակալից տեղեկատվություն/տալ սխեմատիկ նկարագիր՝ համեմունքների դասակարգումը/

2-րդ փուլ՝ մասնագիտական կարողությունների ցուցադրում

1. Ուսանողները պատրաստում են

- ✓ մրգային աղցան
- ✓ տաք գինի . գյուվայն

2. Ուսանողները ցուցադրում են նախապես պատրաստված հումուսի և հավի ֆիլեից բատուրմայի պատրաստման ընթացքը՝ տեսանյութի միջոցով

3. Խաղի միջոցով ուսանողները և դիտորդները զուշակում են տարբեր համեմունքներ՝ համային և հոտային զգայարանների միջոցով

Ակնկալվող արդյունք

Մասնագիտական լրացուցիչ գիտելիքներով հարստացած, մասնագիտությամբ հետաքրքրված ուսանողներ:

Դասավանդող՝ Ա. Պետոյան

Լուսաբանում

Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարանում ապրիլի 12-ին խոհարար մասնագիտությամբ երկրորդ կուրսի մասնակցությամբ անցկացվեց «Համեմունքների կախարդական ուժը» թեմայով բաց դաս: Դասի նպատակն էր ուսանողներին ծանոթացնել համեմունքների ծագմանը և բուժական նշանակությանը, ներկայացնել դրանց խոհարարական ճիշտ կիրառման եղանակները, զարգացնել գեղագիտական և համային ճաշակ:

Բնության զարթոնքի գույների ու բույրերի ելևէջներով էր ձևավորված ողջ լսարանը: Խոհարարի ստեղծագործական մտքի թռիչքը համաձուլվել էր նկարչի վրձնահարվածների հետ և իսկապես, ուտեստների մատուցումը դարձնելով կախարդական ու հմայիչ:

Ուսանողները հանգամանորեն ներկայացրին համեմունքների դասակարգումը և ծագումնաբանությունը, դրանց բուժիչ հատկությունները, խոհարարական օգտագործման յուրահատկությունները և փնջային մի քանի ստեղծագործություն: Նախապես ուսումնասիրվել էր «Համեմունքներ» թեման, համեմունքների համադրությամբ գործնականորեն պատրաստվել էր տարաբնույթ ուտեստներ, որոնք հանդիսականին ցուցադրվեցին նաև տեսանյութի միջոցով:

Դասն առավել հետաքրքիր և բովանդակալից դարձավ ուսանողների ակտիվ մասնակցությամբ՝ միջնորդավորված գրագետ բանավոր խոսքով և գործնական հմտություններով, կազմակերպված մասնագիտական ինքնատիպ խաղերով:

Տեղում ապագա խոհարարների կողմից պատրաստվեց «Gluvine» տաք գինի՝ համեմված արևելյան համեմունքներով, մրգային աղցան՝ ծաղկային մեղրով և վարդագույն պղպեղով:

Դասն ուներ գեղագիտական բարձրաճաշակ լուծումներ, ճկուն կառուցվածք և նպատակային բովանդակություն:

Կազմակերպիչ՝ Ա. Պետոյան

Նկարադարան

Լուսաբանում

Մարտի 31-ին Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարանում տեղի ունեցավ «Հայ երաժշտարվեստի հսկան» խորագրով զեկույց՝ նվիրված Ալեքսանդր Սպենդիարյանի 150-ամյա հոբելյանին:

Միջոցառմանը մասնակցում էին ուսումնարանի տարբեր կուրսերի ուսանողները և մանկավարժական հանրույթը: Սպենդիարյանի կյանքին ու գործունեությանը նվիրված բովանդակալից տեղեկատվությամբ հանդես եկավ դասախոս Ս. Ավետիսյանը: Զեկույցին զուգահեռ ցուցադրվեց Սպենդիարյանի կյանքին ու գործունեությանը վերաբերող սահիկաշար:

Ներկաները հետաքրքրությամբ դիտեցին հատվածներ «Ալմաստ» օպերայից, ունկնդրեցին կտորներ «Ղրիմյան էսքիզներ», «Երևանյան էտյուդներ» ստեղծագործություններից:

Միջոցառումը ծառայեց իր նպատակին: Հանդիսատեսը արժևորեց Սպենդիարյանի ստեղծագործական ժառանգությունը, ինչպես նաև բարեկամական փոխհարաբերությունները հայ, ռուս մշակույթի, արվեստի ականավոր գործիչների հետ. հատկապես, հայ մեծանուն բանաստեղծ Հովհ. Թումանյանի, որոնցից սերված պտուղները դարձել են համաշխարհային գոհարներ:

Պատասխանատու՝ Ս. Ավետիսյան

Ծրագիր

«Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ

Ծրագիր

բաց դասի

Մասնագիտություն՝ «Վարսավիրական արվեստ և գրդեային դիմահարդարում՝ վարսահարդար»

Կուրս՝ III

Թեմա՝ «Վարսավիրության զարգացումը»

Նպատակ

- Հարստացնել ուսանողների մասնագիտական գիտելիքները
- Զարգացնել ուսանողների բանավոր խոսքը
- Զնավորել գեղագիտական ճաշակ
- Զնավորել արագ կողմնորոշվելու ունակություններ
- Խթանել գործնական կարողությունների զարգացումը

Նախապատրաստական աշխատանքներ

Ուսանողներին հանձնարարել փնտրել և մշակել անհրաժեշտ տեղեկատվություն վերոնշյալ թեմաներով.

✓ Պատմական ակնարկ,ուսուցողա-ճանաչողական ֆիլմեր, տեսանյութեր.

- *Վարսավիրության զարգացումը,*
- *Ժամանակակից վարսահարդարներ, նրանց կատարած աշխատանքները՝ ռճային սանրվածքները,*
- *որևէ սանրվածքի զարգացման պատմությունը,*
- *թեմայի վերաբերյալ հետաքրքիր փաստեր*

Դասի ընթացք

Դասն ընթանում է 2փուլով՝

1-ին փուլ՝ տեղեկատվական-վերլուծական

Մահիկաշարի օգնությամբ նշված թեմաների վերաբերյալ հակիրճ տեղեկատվության ներկայացում.

✓ «Վարսավիրության զարգացումը: Պատմական տարբեր ժամանակաշրջաններ:»

✓ Թեմատիկտեսանյութիդիտում, մեկնաբանում

✓ Ժամանակակից վարսահարդարներ և նրանց ռճային աշխատանքները

✓ «Ի դեպ...» խորագրով էջի ներկայացում/հետաքրքիր փաստեր՝ վարսավիրության վերաբերյալ/

✓ Կարճամետրաժ տեսահոլովակի դիտում. «Սանրվածքների զարգացումը 1910-2020 թ.թ.-ի ընթացքում»

2-րդ փուլ՝ մասնագիտականկարողություններիցուցադրում

✓ Ուսանողների կողմից մոդելավորած 1999-2019 թ.թ-ի նորաձև երեք սանրվածքների ցուցադրում և մեկնաբանում.

- *կանացի*

Ուսանողների կողմից եզրափակիչ խոսքի ներկայացում.

«Վարսավիրություն մասնագիտության դերն ու նշանակությունը»

Ակնկալվող արդյունք

Մասնագիտական լրացուցիչ գիտելիքներով հարստացած, մասնագիտությամբ հետաքրքրված, թիմում աշխատելու կարողությամբ և գեղագիտական ճաշակով օժտված ուսանողներ:

Դասավանդող՝ Լ.Հովհաննիսյան

Լուսաբանում

Ս/թ ապրիլի 22-ին «Վարսավիրական արվեստ և զարդային դիմահարդարում՝ վարսահարդար» III կուրսում անցկացվեց «Վարսավիրության զարգացումը» թեմայով բաց դաս: Դասի նպատակն էր հարստացնել ուսանողների մասնագիտական գիտելիքները, ձևավորել գեղագիտական ճաշակ խթանել գործնական կարողությունների զարգացումը:

Դասը մեկնարկեց խոսուն նախաբանով՝ բովանդակալից սահիկաշարի և տեսանյութի զուգորդմամբ: «Վարսավիրության զարգացումը, պատմական տարբեր ժամանակաշրջանների» վերաբերյալ տեսանյութերի ներկայացումը՝ ուսանողների գրագետ մեկնաբանմամբ, դասն առավել տպավորիչ դարձրին: Ինքնատիպ փաստերի միջոցով անդրադարձ կատարվեց նաև ժամանակակից վարսահարդարներին /Գեորգի Կոտ, Մոունիր, Ալեն Չեն, ժակ Թեքեյան, Արմեն Զաքարյան/ և նրանց ոճային աշխատանքներին՝ կարևորելով գեղագիտական բարձր ճաշակը վարսավիրության համայանապատկերում:

Բաց դասի «առանցքային կետում» ուսանողները ներկայացրին «ԿԱՌԵ» սանրվածքի 1910-2020 թ.թ.-ի ընթացքում զարգացման փուլերը արտացոլող կարճամետրաժ ֆիլմ՝ բացառիկ հագեցվածությամբ՝ մանրակրկիտ մեկնաբանելով սարնրվածքի առանձնահատկությունները:

Մի քանի նորաձև սանրվածքների մոդելավորումից հետո, ապագա վարսահարդարները հայտնեցին իրենց տեսակետներն ու կարծիքները ընտրած ժամանակակից մասնագիտության վերաբերյալ, ծավալվեց մասնագիտական գրագետ երկխոսություն «վարսահարդար» մասնագիտությամբ առաջին և երկրորդ կուրսեցիների միջև: Ուսանողների ձեռք բերած կայուն գիտելիքները և հմուտ կարողությունները երաշխիք են ընտրած մասնագիտության հեռանկարային կիրառման և կարիերայի զարգացման:

Դասավանդող՝ Լ. Հովհաննիսյան

Լուսաբանում

2021 թվականի հունիսի 2-ին Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարանի դահլիճում տեղի ունեցավ Վերջին դաս միջոցառումը՝ «Դեպի երազանք» խորագրով: Օրը բացառիկ և տարբերվող էր նախորդներից իր հիշարժանությամբ, խոնարհումի, հարգանքի և ապրեցնող նվիրումի կերտվածքով:

Միջոցառման սկզբում ներկաները հարգանքի տուրք մատուցեցին կրթօջախի այն ուսանողներին, ովքեր պատերազմի ընթացքում մարտիրոսվեցին՝ չխնայելով ամենաթանկը՝ իրենց կյանքը: Միևնույն ժամանակ գնահատանքի և մեծարման արժանացան ռազմաճակատում կռված և վիրավորում ստացած հատատության ուսանողները, ովքեր պայքարել են՝ հանուն ազատ ապրելու և ապրեցնելու, հանուն բոլորիս:

Ավարտական չորս կուրսերի ուսանողները շնորհակալության և երախտիքի խոսքեր նվիրեցին մանկավարժներին՝ գնահատելով Ուսուցչի հայրենասիրությունը, լուսավոր աշխատանքի վեհությունը:

Կյանքում ամեն ինչ հաղթահարելի է, քանի որ ուսումնարանի տարիներին ուսանողները ձեռք են բերել մասնագիտական գիտելիքներ և կարողություններ, ստացել են հայեցի դաստիարակություն, ոգեշնչվել հայրենասիրական դասերով:

Դահլիճում ստեղծվել էր պահին համահունչ ներդաշնակություն, զրույցի էին բռնվել բոլորի սրտերը: Ոգևորիչ ու տպավորիչ էր հատկապես բեմադրված ազգային երգն ու պարը:

Միջոցառումը կազմված էր Անտուան դը Սենտ Էքզյուպերիի «Փոքրիկ Իշխանի» մոտիվներով: Յուրաքանչյուրը ստեղծել էր իր մոլորակը, իր փիլիսոփայությունը և կերպավորվել որպես փոքրիկ իշխաններ: Նրանց հավատամքը մեկն էր. «Եկե՛ք հավատանք մեր երազանքին, դեպի՞ երազանք....»:

Վերջին դասի ավարտին հնչեցին շնորհավորանքներ և բարեմաղթանքներ: Տնօրեն Քնարիկ Ահարոնյանը հատկանշեց, որ ուսումնարանում ստացած արհեստի ու արվեստի դասերը կդառնան ուղենիշ՝ նոր ու լուսավոր կյանք մուտք գործելու համար:

Հրաժեշտի հուզիչ պահը ստիպում էր ուսանողներին խորհել, որ վերջին զանգի դողանջներով ազդարարվում է չափահասության և նոր կյանքի սկիզբը:

Ս. Էլբակյան

Նկարադարան

Լուսաբանում

Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարանը «Բիզնես և կրթություն գործընկերություն» հիմնադրամի, 5165 շարժման հետ համագործակցությամբ մասնակցեցին «Համահայկական մաքրության օր» միջոցառմանը, որի շրջանակներում մաքրման աշխատանքներ կատարեցին Շիրակի մարզի Սառնաղբյուր համայնքի Գրիգոր Լուսավորիչ ուխտատեղի, Սբ. Թադեոս Առաքյալ, Սբ. Հակոբ, Հոգեվանք հոգևոր տարածքներում:

Համայնքում ուխտավորներին դիմավորեց հոգևոր հովիվ տեր Հակոբը, նա օրհնեց ուսանողների նախաձեռնությունը, միասնական աղոթք բարձրացրին առ Աստված, որից հետո ուսանողները մեծ ոգևորությամբ մասնակցեցին մաքրման աշխատանքներին:

Համակարգված աշխատանքների շնորհիվ տարածքները մաքրվեցեն ավելորդ խոտածածկից և կուտակված աղբից:

Աստվածահաճո գործից հետո ուսումնարանի դասախոս Արման Պետրոսյանը ներկաներին ներկայացրեց տեղեկատվություն՝ Սառնաղբյուրի պատմական և մշակութային արժեքների վերաբերյալ: Այնուհետև մասնակիցները լրացրին «Ծանոթություն պատմական և մշակութային տուրիզմի զարգացման որոշ մասնագիտությունների հիմունքներին» մոդուլի հիման վրա կազմված հարցաթերթիկները՝ արտահայտելով իրենց կարծիքներն ու վերաբերմունքը իրականացված միջոցառման վերաբերյալ:

Ուսանողները տուն դարձան իրենց ուխտը վերահմատավորած ու հոգևոր ուժով տոգորված:

Ս. Էլբակյան

Նկարադարան

Ծրագիր

«Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ

«Հայ գիրքը՝ պատմության քառուղիներում» խորագրով կլոր-սեղան քննարկում

Անցկացման ամսաթիվը՝ 24.05.2021թ.

Մասնակիցներ՝ Ուսանողական խորհուրդ

Միջոցառման նպատակը.

- Ներկայացնել գիրքը՝ որպես հոգևոր-մշակութային արժեք:
- Հայ գիրքը դարձնել զարթոնքի գաղափարակիր և մտավոր կենցաղի նորոգության խորհրդանիշ:
- Ձևավորել նվիրական վերաբերմունք գրքի՝ որպես հանրօգուտ, համամարդկային և մնայուն արժեքի:

Ընթացքը.

- Նախամուտք - Հայ առաջին տպագիր գրքի՝ Ուրբաթագրքից թարգմանված հատված. «Բայց եթէ ձայնդ կամ արտասուքդ, ով Աստեղափառ...»
- Նախապատմություն.
  - 16-րդ դար: Հայ տպագրության նախահայր՝ Հակոբ Մեղապարտ
  - 16-րդ դարի հայկական տպագրության ժամանակագրական պատկերը
- 17-րդ դար: Ոսկանյան տպարան
  - 17-րդ դարի հայկական տպագրության ժամանակագրական պատկերը
- 18-րդ դար
- 19-րդ դար
- 20-րդ դար
- Նորագույն շրջան
- Հայ ժողովրդի գոյատևման փրկության ակունք՝ տպագիր գրքին ներբողված բարոյախրատական գաղափարների ներկայացում զուգակցված ոսկեդարյան շարականների ելևէջներով
- Վերլուծություն և ամփոփում

Ակնկալվող արդյունքը.

- Ուսանողների հայեցի դաստիարակման գործում հայ ինքնությունը կերտած ազգային արժեքների վերարժևորում, մշակութային ժառանգության ճանաչում և գնահատում, հոգևոր ու մտավոր զարգացում, արժեքային համակարգի ձևավորում:

Գրադարանավար՝ Ս. Հակոբյան

Լուսաբանում

«Սրբազան գրքերին մեկ հայացք գցելը բարեպաշտ կյանքի է մղում»...

Ս. Ե. Կիպրացի

Մայիսի 24-ին Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարանի ուսանողները հանգրվանել էին Շիրակի մարզային գրադարանում: Օրվա խորհուրդը գիրքն էր. այն դարձնել զարթոնքի գաղափարակիր և մտավոր կենցաղի նորոգության խորհրդանիշ:

«Բայց եթէ ձայնդ կամ արտասուքդ ով Աստեղափառ..». հայ առաջին տպագիր գրքի՝ Ուրբաթագրքից թարգմանված հատվածով մեկնարկվեց «Հայ գիրքը՝ պատմության քառուղիներում» խորագրով կլոր-սեղան քննարկումը:

Միջոցառման կազմակերպիչներն էին Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարանի գրադարանավար Սեդա Հակոբյանը և Ուսանողական խորհուրդը:

Ուսանողների խոսքը համեմված էր մեր դարավոր պատմության հոլովույթում Մաշտոցի գործի պատգամներով, հայ ժողովրդի գոյատևման փրկության ակունք՝ տպագիր գրքին ներբողված բարոյախրատական գաղափարներով՝ զուգակցված ոսկեդարյան շարականների ելևէջներով:

Միջոցառման ավարտին գնահատանքի խոսքով հանդես եկավ մարզային գրադարանի տնօրեն Գևորգ Ամիրյանը, ով խրատեց պատանիներին ճանաչել և իրենց գործով արժևորել հայ ինքնությունը կերտած ազգային արժեքները, լուսավորյալ մտքով պատասխաններ գտնել ու ճանապարհներ ուղենշել ազգային կյանքի վերածաղկման համար:

Հայ ժողովրդի պաշտամունքի հասնող սերը գրքի հանդեպ և ազգապահպանման հրաշագործ կերտվածքով էր ամփոփված փայտի փորագրման կուրսերի ուսանողների ձեռակերտ ստեղծագործ աշխատանքը, որը սիրով նվիրաբերվեց գրադարանին և զբաղեցրեց իր ուրույն տեղը:

Գրադարանավար՝ Ս. Հակոբյան

Նկարադարան

«Աշխատանքի նկատմամբ անձի մոտիվացիայի ձևավորում»

Լուսաբանում

Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարանի Կարիերայի ուղղորդման կենտրոնը 2020 թվականի սեպտեմբերի 23-ին կազմակերպել էր «Աշխատանքի նկատմամբ անձի մոտիվացիայի ձևավորում» խորագրով սեմինար-դասընթաց, որը վարեց կենտրոնի ղեկավար Լևոն Իգիթյանը: Դասընթացին մասնակցում էին «Համակարգիչների շահագործում՝ օպերատոր համակարգչի» և «Ոսկերչական գործ՝ ոսկերիչ» մասնագիտության երկրորդ կուրսերի ուսանողները:

Դասընթացի թեմաներն էին.

- **Մոտիվացիայի էությունը**
- **Կարիերայի ուղին և այլ արդյունավետ դարձնելու ուղիները**
- **Մասլոուն և մարդկային կարիքների հիերարխիան**
- **Հերցբերգը և երկգործոն տեսությունը**

Սեմինար-դասընթացի ընդհանուր նպատակն է ուսանողների մոտիվացիայի էության, տեսությունների, կարիերայի ուղղո վերաբերյալ գիտելիքների հաղորդումն ու արդյունավետ աշխատանքի նկատմամբ դրական մոտիվացիայի ձևավորումն է:

Կարիերայի ուղղորդման կենտրոն

«Ի՞նչ է կարիերայի կենտրոնը »

Լուսաբանում

2020թ. սեպտեմբերի 25-ին ՀՀ ԿԳՄՍՆ «Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ-ի Կարիերայի ուղղորդման կենտրոնի կողմից անցկացվեց «Ի՞նչ է կարիերայի կենտրոնը (նպատակ, գործառույթներ)» թեմաներով դասընթացի հերթական հանդիպումները:

Դասընթացի ընդհանուր նպատակն է.

Կարիերայի տեղեկատվության, խորհրդատվության, ուղղորդման աշխատանքների, ինչպես նաև կարիերայի պլանավորման կարողությունների ձևավորման միջոցով նպաստել աշխատաշուկայում ուսանողների և շրջանավարտների մրցունակության բարձրացմանը, աջակցել իրենց մասնագիտությամբ զբաղվածության հնարավորությունների բացահայտմանը:

Կարիերայի ուղղորդման կենտրոն

«Հաղորդակցման կարողությունների հմտությունների բացահայտում»

Լուսաբանում

2021 թվականի հունվարի 27-ին 22 ԿԳՄՍՆ «Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ-ի Կարիերայի ուղղորդման կենտրոնի կողմից անցկացվեց «Հաղորդակցման կարողությունների հմտությունների բացահայտում» թեմայով դասընթաց՝ «Ոսկերչություն՝ ոսկերիչ» մասնագիտությամբ 1-ին կուսի ուսանողների համար:

Դասընթացի ընդհանուր նպատակն է.

Ուսանողներին հաղորդակցման էության, տեսակների մասին գիտական գիտելիքների հաղորդումն ու արդյունավետ հաղորդակցման, համոզման կարողությունների, հմտությունների ձևավորումն է:

Կարիերայի ուղղորդման կենտրոն

Լուսաբանում

ՀՀ ԿԳՄՍՆ «Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ-ի կարիերայի ուղղորդման կենտրոնի ղեկավար Լևոն Իգիթյանը 2021 թվականի հունվարի 21-24-ը մասնակցեց «Եղվարդ» երիտասարդական-բնապահպանական ՀԿ-ի կողմից իրականացվող «Ժամանակն է Գործել» / “Time to Act” խորագիրը կրող դասընթացին: Վերջինիս արդյունքում ձեռք բերված գիտելիքներով՝ 2021 թվականի փետրվարի 19-ին, «Համակարգիչների շահագործում՝ օպերատոր համակարգչի» մասնագիտությամբ 3-րդ կուրսի ուսանողների համար անցկացվեց սեմինար-դասընթաց, որի թեման էր «Կլիմայի փոփոխության հետևանքները ՀՀ համար»: Սեմինար-դասընթացը անցկացվեց ինտերակտիվ մեթոդով՝ ուսանողների ակտիվ մասնակցությամբ:

Կարիերայի ուղղորդման կենտրոն

«Սոցիալական ներառում հանուն դրական փոփոխությունների»

Լուսաբանում

Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարանի կարիերայի ուղղորդման կենտրոնի ղեկավար Լևոն Իգիթյանի ուղղորդմամբ «Խոհարարական գործ՝ խոհարար» մասնագիտությամբ 2-րդ կուրսի ուսանողներ Ահարոն Մելիքյանը և Ջոհրաբ Գևորգյանը, «Համակարգչային օպերատորություն՝ օպերատոր համակարգչի» մասնագիտությամբ 3-րդ կուրսի ուսանողուհի Անուշ Սիմոնյանը, 2021 թվականի փետրվարի 18-21-ը մասնակցեցին «Խաղաղության հիմնախնդիրների հետազոտության կովկասյան ինստիտուտի» կողմից իրականացվող «Սոցիալական ներառում հանուն դրական փոփոխությունների» խորագրով ուսուցողական ծրագրին: Ծրագիրը նվիրված էր Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի երիտասարդների կողմից սոցիալական իրավունքների վերաբերյալ գիտելիքների ձեռքբերմանը և կիրառմանը:

Կարիերայի ուղղորդման կենտրոն

«Անձի ինքնագնահատում և SWOT (ՈՒԹՀՌ) վերլուծություն»

Լուսաբանում

Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարանի Կարիերայի ուղղորդման կենտրոնը 2021 թվականի փետրվարի 24-ին կազմակերպել էր «Անձի ինքնագնահատում և SWOT (ՈՒԹՀՌ) վերլուծություն» խորագրով սեմինար-դասընթաց, որը վարեց կենտրոնի ղեկավար Լևոն Իգիթյանը: Դասընթացին մասնակցում էին «Համակարգչային օպերատորություն՝ օպերատոր համակարգչի» մասնագիտության երկրորդ կուրսի ուսանողները:

Դասընթացի թեմաներն էին.

- **Ինքնագնահատում**
- **Ինքնագնահատման վրա ազդող գործոնները**
- **Ինքնագնահատման ձևերը**
- **Ինքնագնահատման հարցաշար**
- **ՈՒԹՀՌ (SWOT) վերլուծություն**

Սեմինար-դասընթացի ընդհանուր նպատակն է ուսանողներին անձի ինքնահաստատման էության, նշանակության, գործոնների, ձևերի, բաղադրիչների վերաբերյալ գիտական գիտելիքների հաղորդումն ու ինքնագնահատման գործնական կարողությունների ձևավորումը:

Կարիերայի ուղղորդման կենտրոն

Լուսաբանում

Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարանի Կարիերայի ուղղորդման կենտրոնը 2021 թվականի փետրվարի 18-ին և 25-ին կազմակերպել էր «Գործատուին ներկայանալու հմտություններ» խորագրով սեմինար-դասընթացներ, որը վարեց կենտրոնի ղեկավար Լևոն Իգիթյանը: Դասընթացիներին մասնակցում էին «Խոհարարական գործ՝ խոհարար» երկրորդ և «Համակարգչային օպերատոր՝ օպերատոր համակարգչի» առաջին կուրսի ուսանողները:

Դասընթացի թեմաներն էին.

- **Ինչպե՞ս կազմել մրցունակ աշխատանքային կենսագրական (CV)**
- **Մրցունակ մոտիվացիոն նամակ գրելու հմտություններ**
- **Աշխատանքային կենսագրականի տեսակները**
- **Աշխատանքային հարցազրույց**

Սեմինար-դասընթացի ընդհանուր նպատակն է՝ գործատուին ներկայանալու հմտությունների՝ արդյունավետ աշխատանքային հարցազրույցի մասնակցելու, մրցունակ ինքնակենսագրական, մոտիվացիոն նամակ գրելու կարողությունների ձևավորումն է:

Կարիերայի ուղղորդման կենտրոն

Լուսաբանում

Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարանի կարիերայի ուղղորդման կենտրոնի ղեկավար Լևոն Իգիթյանի ուղղեկցությամբ ուսումնարանի թվով 5 ակտիվ ուսանողներ՝ 2021 թվականի փետրվարի 25-ին, մասնակցեցին PowerUp-ի և երիտասարդների միջև տեղեկատվական հանդիպման: Հանդիպումն ընթացավ ակտիվ քննարկումներով՝ Հայաստանում տիրող ապատեղեկատվության վտանգները, մեդիագրագիտության իմացությունը, փաստերի ստուգման և քննադատական մտածողության կարևորությունը թեմաների շուրջ:

Փորձագետ Ալեքսանդր Մարտիրոսյանը երիտասարդներին պատմեց նաև ՀԼԱ նոր նախաձեռնության մասին, որը հնարավորությունների մեծ առաջարկ է ներկայացնում Շիրակի, Լոռու և Արմավիրի երիտասարդների համար:

Կարիերայի ուղղորդման կենտրոն

Լուսաբանում

Տեղեկատվական հանդիպումներ Գյումրի և Ախուրյան համայնքների միջնակարգ և հիմնական դպրոցներում

«Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ-ի Կարիերայի ուղղորդման կենտրոնի պատասխանատու Լևոն Իգիթյանը 2021 թվականի ապրիլի 13-17-ը տեղեկատվական հանդիպումներ անցկացրեց Գյումրի և Ախուրյան համայնքների միջնակարգ և հիմնական դպրոցներում: Հանդիպումների նպատակն էր մանկավարժական հանրույթին և 9-րդ դասարանի աշակերտներին տրամադրել տեղեկատվություն՝

- մասնագիտական կողմնորոշման գործիքակազմի և դրանց արդյունավետ կիրառման, ինչպես նաև ուսումնարանի գործունեության և հաջողությունների վերաբերյալ
- ծանոթացնել «Ուսանողական/աշակերտական ընկերություն»-ների փորձարարական ծրագրին, որը գործում է «Բիզնես և Կրթություն Գործընկերություն» հիմնադրամի համագործակցությամբ՝ «Մասնագիտական կրթություն և ուսուցում համագործակցություն Հարավային Կովկասում» ծրագրի շրջանակներում
- ծանոթացնել ուսումնարանում գործող մասնագիտություններին.
  1. Համակարգիչների շահագործում՝ օպերատոր համակարգչի
  2. Վարսավիրական արվեստ և զարդային դիմահարդարում՝ վարսահարդար
  3. Խոհարարական գործ՝ խոհարար
  4. Ռադիոէլեկտրոնային միջոցների տեխնիկական սպասարկում և նորոգում՝ ռադիոմեխանիկ (ռադիոհեռուստատեսային սարքավորումների նորոգման և սպասարկման)
  5. Ոսկերչություն՝ ոսկերիչ
  6. Գեղանկարչություն և քանդակագործություն փորագրող՝ փայտյա գեղարվեստական իրերի
  7. Գեղանկարչություն և քանդակագործություն փորագրող՝ քարե գեղարվեստական իրերի
  8. Վերականգնվող էներգիայի էներգետիկ կայանների մոնտաժում, նորոգում և սպասարկում

Կարիերայի ուղղորդման կենտրոն

Լուսաբանում

Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարանի Կարիերայի ուղղորդման կենտրոնի և «Բիզնես և կրթություն-գործընկերություն» հիմնադրամի համագործակցությամբ ապրիլ ամիսը հայտարարվել է «Բաց դռների ամիս»

«Բաց դռների ամիս» միջոցառումների շարքը շարունակելով՝ 2021 թվականի ապրիլի 20-ին Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարանում հյուրընկալվեցին Շիրակի մարզի Ախուրյան համայնքի թիվ 1 և թիվ 2 հիմնական դպրոցների 9-րդ դասարանի աշակերտները:

Դպրոցականները ծանոթացան «Ֆերտի» բարեգործական կենտրոն» հասարակական կազմակերպության հետ համագործակցությամբ տեղակայված բացօթյա արևային կայան-լաբորատորիային, ինչպես նաև ուսումնարանում 2021-2022 ուսումնական տարում ներդրվող նոր «Վերականգնվող էներգիայի էներգետիկ կայանների մոնտաժում, նորոգում և սպասարկում» մասնագիտությանը:

Հաջորդիվ Կարիերայի ուղղորդման կենտրոնի պատասխանատուի և ուսանողական խորհրդի ուսանողների ուղեկցությամբ երիտասարդները շրջայց կատարեցին արհեստանոցներ և գործնականում ծանոթացան ուսումնարանում գործող առկա մասնագիտություններին, ծրագրերին և ուսանողների կատարած աշխատանքներին:

Շրջայցին հաջորդեց մասնագիտական ճիշտ կողմնորոշմանը խթանող սեմինար-դասընթաց՝ «Կարիեայի կառավարում» և «ՀՀ կրթական համակարգը» թեմաներով, որը վարեց կարիերայի խորհրդատու Լևոն Իգիթյանը:

Միջոցառումն ընդմիջվեց «Առողջ սերունդ» Ուսանողական ընկերության կողմից կազմակերպված համեղ և առողջ սննդի հյուրասիրությամբ:

Կարիերայի ուղղորդման կենտրոն

«Բաց դռների ամիս»

Լուսաբանում

Շարունակելով «Բաց դռների ամիս» միջոցառումների շարքը այսօր՝ 2021 թվականի ապրիլի 23-ին, Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարանում հյուրընկալվեցին «Գյումրու երիտասարդների տուն» բաց երիտասարդական կենտրոնի, Գյումրու թիվ 24 և 4 հիմնական դպրոցների սաները

Լուսաբանում

Շարունակելով «Բաց դռների ամիս» միջոցառումների շարքը այսօր՝ 2021 թվականի ապրիլի 27-ին, Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարանում հյուրընկալվեցին Գյումրու թիվ 15 և 19 հիմնական դպրոցների աշակերտները:

Կարիերայի ուղղորդման կենտրոն

«Բաց դռների ամիս»

Լուսաբանում

2021 թվականի ապրիլի 28-ին Գյումրու թիվ 11, 41, 40 հիմնական դպրոցների աշակերտների և «Գյումրու երիտասարդների տուն» բաց երիտասարդական կենտրոնի սաների այցելությամբ ավարտվեց «Բաց դռների ամիս» միջոցառումների շարքը:

Կարիերայի ուղղորդման կենտրոն

Նկարադարան

ՀՀ ԿԳՄՍՆ ԳՅՈՒՄՐՈՒ
ԹԻՎ 4 ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ
ՊԵՏԱԿԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ
ՊՈԱԿ

Նկարադարան

ՀՀ ԿԳՄՍՆ ԳՅՈՒՄՐՈՒ
ԹԻՎ 4 ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ
ՊԵՏԱԿԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ
ՊՈԱԿ